# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

# ԱՇԽԱՏԱՆՔ

Դասվար

(առարկա)

ԹԵՄԱ՝ Գնահատում: Գնահատման մեթոդաբանությունը, տեսակները: Ձևավորող գնահատում

Կազմեց՝ Սյուզաննա Մանվելի Մաթևոսյան

(անուն, ազգանուն, հայրանուն)

«Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Բալայան Լուսինե

«Կապանի N2 ավագ դպրոց» ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2023

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ----------2

2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3

3. ԳՆԱՀԱՏՈՒՄ: ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ----------4

3.1. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ----------4

3.2. ՈՒ՞Մ և ԻՆՉԻ՞Ն ՊԵՏՔ Է ԾԱՌԱՅԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ----------6

3.3. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ----------8

4. ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԳՆԱՀԱՏՈՒՄ----------9

4.1. ԹԵՍՏ (ՀԱՅՏՈՐՈՇՈՒՄ)----------10

4.2. ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ (ՀԱՅՏՈՐՈՇՈՒՄ)----------11

4.3. ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ (ՀԱՅՏՈՐՈՇՈՒՄ)----------12

4.4 ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (ՀԱՅՏՈՐՈՇՈՒՄ)----------13

5. ՁևԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄ----------13

5.1. ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ----------15

5.2. ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ----------17

5.3. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ----------18

6. ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ----------20

7. ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ և ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ----------20

8. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ԾՆՈՂՆԵՐԻ և ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ-25

9. ԱՄՓՈՓԻՉ ԳՆԱՀԱՏՈՒՄ----------26

10. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------28

11. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ----------29

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գիտելիքը հզոր ուժ է, որը, հարստացնելով մարդու միտքն ու հոգին, օգնում է ավելի ճիշտ ապրել: Կրթված մարդը, այնուամենայնիվ, կարող է գտնել իր տեղն ու դերը մեր՝ այսչափ արագ զարգացող աշխարհում:

Հայաստանի Հանրապետության նոր սոցիալ-տնտեսական պայմանները բարձր պահանջներ են առաջադրում ինչպես մատաղ սերնդի գիտելիքների, կարողությունների, հմտությունների և արժեքային համակարգի իրականացման, այնպես էլ կրթության բովանդակության, նրա կառուցվածքի, մեթոդների ու միջոցների բարեփոխման պատասխանատուների առջև:

Գնահատումը բազմաբնույթ եզրույթ է, որը սահմանվում է որպես տեղեկությունների ձեռքբերման գործընթաց, որն օտագործվում է սովորողների ուսումնառության, առարկայական ծրագրերի և պլանների, ինչպես նաև կրթական քաղաքականության մասին որոշումներ կայացնելու համար:

Կրթության բոլոր մակարդակներում ժամանակակից ուսուցչից գործուն մասնակցություն է պահանջում, քանզի հաղորդվող բովանդակության գործում՝ ուսուցիչը պետք է փորձի լուծել բովանդակության երկու մակարդակները միմյանց համապատասխանեցնելու խնդիրը: Խնդիր է դրվում ոչ թե սոսկ դասագրքից նյութը հաղորդել, այլ այնպես սովորեցնել, որի արդյունքում աշակերտի պատրաստվածության մակարդակը համապատասխանի չափորոշիչներին:

Այս հետազոտական աշխատանքի հիմնական նպատակը գնահատման մեթոդաբանության, ձևերի, կիրառության խնդիրների բացահայտումն է:

Ես՝ որպես դասվար, այսուհետ առնչվելու եմ ձևավորող գնահատման հետ. ուստի ճիշտ և տեղին համարեցի այս աշխատանքի միջոցով գնահատման գործող ձևերից զատ առանցքային անդրադառնալ ձևավորող գնահատմանը՝ վեր հանելով նրա առավելություններն ու թերությունները, դժվարությունները, հնարավոր հաղթահարման տարբերակները:

# ԳՆԱՀԱՏՈՒՄ: ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մեթոդաբանությունը բնութագրում է.

- գնահատման հիմնական նպատակները, խնդիրները, սկզբունքները և գործառույթները,
- սովորողների ուսումնական գործունեության ընթացքի և արդյունքների գնահատումը կարգավորող սկզբունքները, մոտեցումները, մեթոդները,
- գնահատման տեսակները և ստուգման ձևերը:

Ուսումնառության արդյունքների գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի կարողունակությունների զարգացման աստիճանը ըստ ուսումնական առարկաների՝ չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների ու հմտությունների մակարդակի, ինչպես նաև դիրքորոշումների ու արժեքների ձևավորման: (ՀՊՉ, IX, կետ 37)

«Գնահատում» բառը կրթական համատեքստում կիրառության մեջ է մտել երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Կրթական գնահատումը նկարագրում է ցանկացած գործունեություն, որը կարող է տեղի ունենալ սովորողի կամ սովորողների գիտելիքների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով: Նոր մոտեցումներով գնահատումը ոչ միայն սովորողի առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման ընթացքի խթանման կարգավորման, վերահսկաման և բարելավման մեխանիզմ: Գնահատման ներդրվող համակարգը պիտի հիմնվի արդարության, հուսալիության, անկողմնակալության, հավաստիության, հիմնավորվածության, մատչելիության, թափանցիկության սկզբունքների վրա և ապահովի համադրելիությունը միջազգայնորեն ընդունված գնահատման չափանիշներին:

Խնդիրները

- գնահատման տարբեր ձևերի և տեսակների համակարգված կիրառման միջոցով հնարավորություն տալ սովորողներին առավելագույնս ցուցաբերել իրենց գիտելիքները, կարողությունները և հմտությունները,

- գնահատման չափանիշների հստակեցման միջոցով բարելավել ուսուցման գործընթացի արդյունավետությունը,
- ձևավորող գնահատման կանոնակարգման շնորհիվ ավելացնել սովորողների հետաքրքրությունն ուսուցանվող առարկաների նկատմամբ և բարձրացնել ուսումնառության արդյունավետությունը,
- խթանել սովորողի ինքնաճանաչման, ինքնազարգացման և ինքնագնահատման կարողությունների զարգացումը, նպաստել նրա անձնային որակների և դիրքորոշումների ձևավորմանը, բարձրացնել ուսուցիչների պատասխանատվության և մասնագիտական պատրաստվածության աստիճանը:

Գնահատման հիմնական գործառույթներն են՝

1. Սովորողի ուսումնական գործունեության և առաջադիմության գնահատումը, ինքնակրթության և ինքնագնահատման, կրթական մի աստիճանից մյուսին անցման հնարավորության ապահովումը, կրթության շարունակականության խրախուսումը:
2. Սովորողին ներկայացվող պահանջների կատարման, ուսումնական նյութի յուրացման աստիճանի բացահայտումը
3. Դպրոցի գործունեության արդյունավետության բացահայտումը, ուսուցիչ-սովորող համագործակցային հարաբերությունների զարգացմանը:
4. Սովորողի հետ տարվող անհատական աշխատանքի բովանդակության և ծավալի ճշգրտումը:
5. Սովորողի անձնային որակների ձևավորման և վարքագծի բացահայտմանը նպաստելը, ինքնաճանաչողության ապահովումը:
6. Մանկավարժների վերապատրաստման և մասնագիտական աճի ապահովումը:
7. Չափորոշիչների, առարկայական ծրագրերի, դասագրքերի և ուսումնական այլ նյութերի, ուսուցման մեթոդների կատարելագործման հիմքերի ապահովումը:

8. Հանրակրթության բարեփոխման ուղղությունների հստակեցումը, բովանդակության արդիականացումն ու կրթական համակարգի համապատասխանեցումը միջազգայնորեն ընդունված չափանիշներին:
9. Սովորողի ուսումնական գործունեության արդյունքների որակավորումը
10. Դպրոցի հանդեպ ծնողների, համայնքի, հանրության վստահության ձևավորումն ու ամրապնդումը:

## ՈՒ՞Մ և ԻՆՉԻ՞Ն ՊԵՏՔ Է ԾԱՌԱՅԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Սովորողի համար գնահատականը խրախուսանքի միջոց է, արձանագրում է ուժեղ և թույլ կողմերը, հաջողություններն ու վրիպումները: Սովորողին ուղղված գնահատականը պետք է վերաբերի նրա կոնկրետ գործողություններին, արարքներին, գործունեության արդյունքներին, այլ ոչ թե անձին: Եթե սովորողը դեռ չի կարողանում խնդիր լուծել, դա դեռևս հիմք չէ դատողություններ անելու նրա մտավոր ընդունակությունների մասին:

Գնահատումը ուսուցչին պետք է աշխատանքը պլանավորելու, փոփոխություններն արձանագրելու, նպատակին հասնելու աստիճանը պարզելու, արդյունքը փաստելու համար:

Գնահատումը ծնողին անհրաժեշտ է երեխայի առաջընթացն արձանագրելու, դաստիարակության ձևերի շուրջ մտածելու, դրանք ավելի ճկուն և բազմազան դարձնելու համար:

Այլոց՝ շահագրգիռ կամ հետաքրքրված անձանց (մանկավարժական անձնակազմ և այն) համար անհրաժեշտ է ուսումնական նյութի ազդեցությունը տեսնելու, սովորողի մասին տեղեկություններ ունենալու համար:

Գնահատման մեջ երկու կարևոր սկզբունք կա. այն պետք է հիմնավորվի առաջադրած նպատակներով և ցույց տա դրանց հաջողության աստիճանը: Գնահատումը պետք է ձգտի առավելագույն օբյեկտիվության:

Կարելի է ասել՝ կրթության մեջ գնահատման գործընթացը նրա բոլոր մասնակիցների (սովորողների և ուսուցիչների) բաց համաձայնագիրն է:

Գնահատվում են ինչպես գործընթացները այնպես էլ այդ գործընթացների արդյունքները: Գնահատման կարևոր խնդիրներից մեկը նրա ինքնանպատակ չլինելն է: Գնահատականը պետք է նպատակաուղղված լինի սովորողի ինչպես կրթական, այնպես էլ անհատական կարողունակությունների զարգացմանը: Սովորողին գնահատելիս պետք է հիմնվել անհատական համեմատական կողմնորոշման վրա՝ սովորողի առաջընթացը, զարգացման առանձնահատկությունները, ուսումնական գործընթացի յուրահատկությունները, համեմատել ոչ թե մյուս սովորողների հետ, այլ հենց իրենց հետ: Գնահատելիս անհրաժեշտ է առաջնորդվել լավատեսական մոտեցմամբ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր աշակերտից ակնկալվող ուսումնական հաջողությունները և գնահատել նույնիսկ ամենափոքր առաջընթացը: Գնահատականը պետք է օգտագործել որպես հետադարձ կապ, որն անհրաժեշտ է աշխատանքի արդյունավետությունը գնահատելու, այլ ոչ թե նրան խիստ վերահսկողության տակ առնելու կամ ճնշելու համար:

# ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հանրակրթության ոլորտում պայմանականորեն տարանջատում են գիտելիքի ներքին և արտաքին միավորային գնահատման ձևեր:

**Ներքին գնահատում**

Կիրառվում է դասի ընթացքում՝ հարցման, ուսուցողական, ստուգողական միջոցով, դասընկերների և ուսուցիչների առօյա շփումների, ուսումնական գործունեության ամփոփման ընթացքում: Այս ձևով գնահատվում են ոչ միայն յուրաքանչյուր սովորողի ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները, այլ նրա զարգացման ընթացքը:

**Արտաքին գնահատում** Իրականացվում է դպրոցից դուրս գործող համապատասխան կազմակերպությունների կողմից: Սովորողների գիտելիքների կողմից ամփոփիչ գնահատման դրական արդյունքները հիմք են դառնում շրջանավարտին կրթական ավարտական փաստաթուղթ տալու, որակավորում շնորհելու, կամ մասնագիտական ուսումնական հաստատության ընդունելությանը մասնակցելու համար: Արտաքին գնահատմամբ բացահայտվում են ուսումնական գործընթացի ամբողջական արդյունքները, ինչպես նաև՝ որոշակի առարկայի յուրացման մակարդակը առանձին դպրոցում, մարզում կամ հանրապետության ողջ տարածքում

Հանրակրթական ուսումնական հաստատությունում ընթացիկ գնահատումն իրականացվում է քանակային (միավորային) և ձևավորող (ուսուցանող) ձևերով:

Ուսուցանող գնահատումը սովորողի կողմից նյութի յուրացման հետ կապված թերըմբռնումների, սխալների ու դժվարությունների բացահայտման և դրանց հաղթահարման , սովորողի մտածողության և ճանաչողության ոլորտն ընդլայնելու համակարգված գործընթացն է, ինչպես նաև հետադարձ կապի կիրառմամբ ուսումնական գործընթացում տեղեկությունների հավաքագրման և արժևորման միջոցով կրթական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի ու դասավանդման մեթոդների բարելավումը:

Միավորային գնահատումն ուսումնառության ընթացքում սովորողի ձեռքբերումների մակարդակը թվանշանով արտահայտելն է՝ համաձայն առարկայական չափորոշչի:

Միավորային գնահատման արդյունքները գրանցվում են 1-ից մինչև 10 ամբողջ թվերով արտահայտող միավորային սանդղակով:

Ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման երեք տեսակ, որոնք հաջորդում եմ մեկը մյուսին և կարող են պարբերաբար կրկնվել նշված հաջորդականությամբ.

1) հայտորոշիչ (դիագնոստիկ) գնահատում,

2) ձևավորող գնահատում,

3) ամփոփիչ գնահատում:

Այս՝ հայտորոշիչ - ձևավորող - ամփոփիչ շղթան կարելի է անգամ մեկ դասի ընթացքում անել՝ փոքրիկ փուլի մեջ և այդ փուլերը կարող են կարճատև և երկարարտև լինել՝ դասից մինչև ենթաթեմա, թեմա, կիսամյակ կամ տարի: Գնահատման տարբեր տեսակների ժամանակ կիրառվում են բազմազան գործիքներ, ընդ որում՝ միևնույն գործիքը կարող է կիրառվել գնահատման բոլոր տեսակների դեպքում: Կարևոր է, թե ինչ նպատակով է կիրառվում այդ գործիքը և թե ինչպես են օգտագործվելու տվյալ գնահատման արդյունքները:

## ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ուսուցման և ուսումնառության գործընթացի հաջողությունը մեծապես պայմանավորված է սովորողի կարողունակության առկա մակարդակի ճիշտ հայտորոշմամբ (դիագնոստիկա), այսինքն՝ անհրաժեշտ է ճիշտ բացահայտել սովորողների նախնական գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքն ու արժեքները նոր թեմայի (թեմաների) կամ ենթաթեմայի (ենթաթեմաների) վերաբերյալ ուսումնական գործընթացի որևէ փուլի՝ ուսումնական տարվա, կիսամյակի, դասի մեկնարկից առաջ: Փուլի ընտրությունն ուսուցչինն է :

Հայտորոշիչ գնահատման համար առաջարկվում են հետևյալ ձևերը.

1. Թեստ

2. բանավոր հարցում
3. գրավոր աշխատանք
4. գործնական աշխատանք

Ուսուցչի համար կարևոր է իմանալ, թե սովորողն ինչ գիտի կամ չգիտի, կամ սխալ գիտի նոր ուսուցանվող թեմայի վերաբերյալ, ինչը հնարավորություն է տալիս ճիշտ պլանավորելու ուսուցման և ուսումնառության բովանդակությունը, գործընթացը, ինչպես նաև ընտրելու ուսուցման կազմակերպման արդյունավետ ձևեր, միջոցներ և մեթոդներ: Բերեմ իմ անձնական օրինակը. Հաշվի առնելով, որ 2-րդ դասարանում սովորողները որոշակիորեն ծանոթացել էին եռանիշ թվերի գրությանը, կատարել էին գործողություններ (գումարում և հանում), թվերը ներկայացրել էին կարգային գումարելիների գումարի տեսքով, իսկ 3-րդ դասարանի դասընթացը սկսվում է նմանատիպ դասերով, որոշեցի հենց սկզբից իրականացնել հայտորոշում՝ ուժեղ և թույլ կողմերը որոշելու, հետագա աշխատանքս ճիշտ կազմակերպելու համար: Կազմել էի այսպիսի թեստ.

1. Նշվածներից ո՞րն է չորս հարյուր քառասուն թիվը.

ա) 404 գ) 400

բ) 440 դ) 40

2. Թվերը գրել թվանշաններով, դրանցից մեկը ներկայացնել կարգային գումարելիների գումարի տեսքով

ա) երեք հարյուր վաթսունհինգ

բ) յոթ հարյուր յոթ

գ) հարյուր ութսունինը

3. Հաշվել 565 և 122 թվերի գումարն ու տարբերությունը:

Աշխատանքի կատարմանը հատկացրել էի 10 րոպե, մասնակցում էին բոլոր՝ 26 սովորողները. քանի որ աշխատում էին թերթիկների վրա, ժամանակը ծախսվեց միայն

առաջադրանքները կատարելու վրա: Արդյունքներն անընդհատ իմ աչքի առաջ ունենալու համար կազմել էի ստուգաթերթ, որը հետագայում հնարավորություն տվեց կենտրոնանալ այն սխալների վրա, որը թույլ էին տվել սովորողները:

| | Սով.1 | Սով.2 | Սով.3 | Սով.4 | Սով.5 | Սով.5 | Սով.6 | Սով.7 | Սով.8 | Սով.9 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Առ.1 | + | + | + | + | + | + | + | - | + | - |
| Առ.2 ա | | | | | | | | | | |
| Բ | | | | | | | | | | |
| Գ | | | | | | | | | | |
| Կարգ. գում. | | | | | | | | | | |
| Թվ. գում. | | | | | | | | | | |
| Թվ. տարբ. | | | | | | | | | | |

«+» կամ «-» նշաններով նշելով համապատասխանաբար ճիշտ կամ սխալ կատարած առաջադրանքները հնարավորություն ունեցա հետագա ուսուցումը և ուսումնառությունը ճիշտ կազմակերպել:

## Բանավոր հարցում (հայտորոշում)

Հայտորոշիչ գնահատման նպատակով իրականացվող բանավոր հարցման հիմնական մոտեցումը հարցեր ուղղելն է սովորողին, խմբին կամ ամբողջ դասարանին, ընդ որում՝

պարզ և միջին բարդության հարցեր, որոնք պետք է ձևակերպված լինեն հստակ, պարզ և միայն այդ թեմային վերաբերող՝ բարդության առաջին կարգի հարցեր.

Օրինակ՝ Ո՞վ է…, Ի՞նչ գիտեք…, Որտե՞ղ է գտնվում..., Ե՞րբ է ստեղծվել..., Ո՞ր դարից է սկիզբ առել… և այլն:

Բարդության երկրորդ աստիճանի հարցեր.

- Կարո՞ղ ես նկարագրել…
- Ինչպիսի՞ն են / է…
- Եթե այդպես է, ապա ...
- Ո՞րն է հիմնական իմաստը …
- Ի՞նչ քայլեր են հաջորդում …
- Ի՞նչ ես մտածում դրա մասին …
- Կարո՞ղ ես համեմատել ...
- Կարո՞ղ ես բացատրել, թե …

Բանավոր հարցումը, սակայն, հնարավորություն չի տալիս միաժամանակ ստուգելու և ամրագրելու բոլորի նախնական գիտելիքներն ու հմտությունները, քանի որ ոչ բոլոր աշակերտներն են լիարժեք մասնակցում քննարկումներին:

## ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ (ՀԱՅՏՈՐՈՇՈՒՄ)

Ինչպես բանավոր հարցումը, այնպես էլ գրավոր աշխատանքը ևս կիրառվում է գնահատման 3 տեսակներում՝ կախված նպատակից: Գրավոր աշխատանքի ձև են թելադրությունը, շարադրությունը, փոխադրությունը, էսսեն, թեստը, բաց հարցերով կարճ շարադրանք պահանջող առաջադրանքները: Հայտորոշման նպատակով, օրինակ, կարելի է ընտրել թելադրության համար տեքստ, որով ուզում ենք ստուգել սովորողների գիտելիքները այս կամ այն ուղղագրության վերաբերյալ: Հետևաբար, այդ տեքստում պետք է լինեն տվյալ ուղղագրությանն առնչվող բազմաթիվ կիրառություններ: Ինչպես որ հայտորոշիչ թեստի արդյունքներն են գրանցվում սխալների քարտեզում, այնպես էլ

գրավորի աշխատանքների արդյունքները պետք է վերլուծվեն, որպեսզի նոր դասը պլանավորելիս անդրադառնանք այդ սխալներին և բարելավման ուղիներ որոշենք՝ ելնելով սովորողների կարիքներից: Գրավոր աշխատանքների միջոցով կարելի է ստուգել բազմաթիվ ուղղագրական կանոններ և գիտելիքներ:

## Գործնական աշխատանք (հայտորոշում)

Գործնական աշխատանքը նույնպես կարելի է կիրառել հայտորոշման նպատակով՝ կախված ուսումնասիրվող առարկայի և ուսուցանվող թեմայի առանձնահատկություններից: Գործնական աշխատանքի միջոցով հայտորոշում կարելի է իրականացնել՝ որոշելու համար, թե գործնական ինչ հմտությունների և կարողությունների է տիրապետում սովորողը, որոնք կարող են հիմք հանդիսանալ մեկնարկվող թեմայի ուսումնասիրման համար:

## ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ձևավորող գնահատման նպատակն է բացահայտել ողջ դասարանի և յուրաքանչյուր սովորողի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները՝ ուսուցման և ուսումնառության գործընթացը բարելավելու համար:

Ձևավորող գնահատումը չի ենթադրում տարբեր սովորողների ուսումնական արդյունքների համեմատում, այլ ապահովում է սովորողի՝ տվյալ պահի անհատական ուսումնական ձեռքբերումների համեմատությունը նրա նախկին ձեռքբերումների հետ:

Ձևավորող գնահատումն իրականացվում է 1-12-րդ դասարաններում:

Այն ապահովում է.

1) ներառական, փոխներգործուն և համագործակցային ուսուցման ու ուսումնառության միջավայրի ստեղծում,

2) սովորողի զարգացմանը նպաստող կառուցողական հետադարձ կապ,

3) սովորողի կողմից ինքնագնահատման, փոխադարձ գնահատման և վերլուծության որակների ձեռքբերում:

Ձևավորող գնահատումը ուսուցչի կողմից հետևյալ 5 բաղադրիչների պլանավորված և պարբերաբար օգտագործումն է ամենօրյա աշխատանքում. (նկար 1)

- Ուսման հանդեպ մոտիվացիայի բարձրացման նպատակով՝ սովորողների ակտիվ մասնակցության ապահովում սեփական ուսումնառության գործընթացին:
- Սովորողների ինքնագնահատման ունակության ձևավորում:
- Սովորողների փոխադարձ գնահատման ունակության ձևավորում:
- Արդյունավետ հետադարձ կապի ապահովում:
- Ուսումնական գործընթացի ճշգրտում և շտկում՝ հաշվի առնելով գնահատման արդյունքները:

Նկար 1

Ձևավորող գնահատման ձևերն ընտրելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի յուրաքանչյուր սովորողի առանձնահատկությունները, ուսուցանվող նյութի բովանդակությունը և սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:

Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.

1) գրավոր կարճ հարցում (թեստ)

2) բանավոր հարցում

3) գրավոր աշխատանք (թելադրություն, փոխադրություն, շարադրություն, արտագրություն և այլն)

4) գործնական աշխատանք

5) տնային աշխատանք

6) թղթապանակ

7) նախագծային աշխատանք և այլն:

Ձևավորող գնահատման ձևերն ու գործիքները կարող են կիրառվել ինքնագնահատման և փոխադարձ գնահատման նպատակով:

Նշված ձևերից յուրաքանչյուրի համար սահմանվում են գնահատման չափանիշներ, որոնք պետք է լինեն հստակ և ճշգրիտ, որպեսզի գնահատումը լինի օբյեկտիվ:

Չափանիշների հիման վրա ապահովվում է ուսուցչի և սովորողի միջև հետադարձ կապը, բացահայտվում է, թե առաջադրանքի կատարման ընթացքում սովորողը ինչ դժվարություններ ունի, ինչի հիման վրա էլ որոշվում են ուսուցման և ուսումնառության կազմակերպման հարմարեցումներն ու փոփոխությունները՝ որոնք ուղղված են սովորողի ուսումնառության արդյունքները բարելավելուն:

Ձևավորող գնահատում իրականացնելիս օգտագործվում են սովորողի ուսումնական ձեռքբերումները և դժվարությունները նկարագրող վերլուծություններ, մեկնաբանություններ:

Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի տրվում:

Ձևավորող գնահատումն ուսուցչի և սովորողների համատեղ հետադարձ կապի անընդհատությունն է՝ երկկողմ գործունեության ճշգրտման, ուսուցման գործընթացի բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով: Ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքում ուսուցչը պետք է ուշադրություն դարձի հետևյալ հարցերին.

- Որքանո՞վ են սովորողները հասկացել անցած նյութը
- Ինչպե՞ս կարող եմ ստուգել
- Ո՞ր առաջադրանքն էր դժվար սովորողների համար
- Եթե առաջադրանքը դժվարություն է առաջացրել, ապա ի՞նչը պետք է փոխել դասավանդման մեթոդներում

Չափազանց կարևոր է սովորողների ակտիվ մասնակցությունը ուսումնական գործընթացին, և այս առումով ձևավորող գնահատման ճիշտ կիրառումը կապահովի նրանց ցանկալի ներգրավվածությունն ու ակտիվ մասնակցությունը: Այդ նպատակով վերջնարդյունքները, ինչպես նաև դրանց գնահատման չափանիշները պետք է հասկանալի լինեն սովորողներին: Նպատակներն ու վերջնարդյունքները կարելի է ներկայացնել, որպեսզի ուսուցիչն ու սովորողները հնարավորություն ունենան անդրադառնալու դրանց և ստուգելու իրենց ձեռքբերումները:

Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի կողմից՝ ինքնագնահատման, փոխադարձ գնահատման միջոցով:

**Գրավոր աշխատանքները** ընթացիկ գնահատման արդյունավետ տեսակներից մեկն է, որ կիրառվում է բոլոր ուսումնական առարկաների շրջանակներում և նպատակ է հետապնդում նոր ՀՊՉ-ով սահմանված 8 առանցքային կարողունակությունների զարգացմանը: Գրավոր աշխատանքների միջոցով կարելի է սովորողների մեջ ակտիվություն, ինքնուրույնություն, սեփական աշխատանքի որակի նկատմամբ պատասխանատվություն զարգացնել: Դիտարկենք, թե ինչպես է գրավոր աշխատանքներից մեկի՝ թելադրության ժամանակ իրականացվում ՁԳ[1]-ը: Մենք սովոր ենք, որ աշխատանքի ավարտից հետո, ուղղելով սխալները՝ տանք հրահանգներ սխալ գրած բառը կամ բառերը մեկ կամ մի քանի տող գրելու: Սակայն ՁԳ-ի դեպքում կիրառվում է այսօրինակ աշխատանք. ուսուցիչը ուղղորդող գրառումներ է կատարում, օրինակ, ուղղագրական արժեք ներկայացնող բառից նույնարմատ օրինակներ է տալիս՝ հրահանգելով գտնել սեփական սխալներն ու ուղղել: Բնական է, որ այս դեպքում

[1] ՁԳ- ձևավորող գնահատում

վայելչագրությանն առանձնապես ուշադրություն չի դարձվում:, Սովորողը, որ նախկին գնահատման ժամանակ ուղղակի կատարում էր ուսուցչի տված օրինակներին համապատասխան, այս անգամ կարդում է ուսուցչի հրահանգը, ուսումնասիրում տրված օրինակները, կարդում տեքստը և գտնելով սխալները՝ ուղղում դրանք:

**Գործնական աշխատանքը ՁԳ-ի համատեքստում**

Գործնական աշխատանքները սովորողներին հնարավորություն են տալիս կիրառելու գիտելիքներն ու հմտությունները, նպաստում է սովորողների ինքնուրույնության ու փորձառության ձևավորմանը: Գործնական աշխատանքը կիրառվում է բոլոր ուսումնական առարկաների շրջանակներում: Գործնական աշխատանքները դասակարգվում են՝

- Վերարտադրողական
- Մասամբ որոնողական
- Ստեղծագործական

Գործնական աշխատանքների տեսակներից են պաստառի ձևավորումը, ֆիլմի, տեսահոլովակի նկարահանումը, դիտումն ու քննարկումը, երգի միջոցով ուսումնառությունը, դերախաղը, փորձը, էքսկուրսիաները և այլն: Սրանք կարող են իրականացվել թե՛ անհատական , թե՛ խմբային ձևերով՝ տանը, դասարանում, համայնքում, իսկ արդյունքներն էլ ներկայացվում են գրավոր կամ բանավոր:

Նշված տեսակներից անդրադառնանք դերախաղին, որը նաև համարվում է խոսքի զարգացման ակտիվ ձևերից մեկը: Այն ունի կիրառման լայն հնարավորություն, նպաստում է սովորողների իմացական գործընթացների (մտածողություն, երևակայություն, ուշադրություն), հուզակամային ոլորտը (հույզեր, զգացմունքներ), ստեղծարարությունը, սովորողների հնարամտությունը, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու, իր և ընկերների աշխատանքները գնահատելու, միմյանց օգնելու, անհատապես և խմբային աշխատելու կարողությունների զարգացմանը:

Դերային խաղը բազմափուլ աշխատանք է: Նրա փուլերն են՝

- Նախապատրաստական փուլ

- Խաղի փուլ
- Անդրադարձի փուլ

Նախապատրաստական փուլում քննարկվում են այն կանոնները, որոնք պետք է պահպանվեն դերախաղի ընթացքում, բաժանվում են դերերը, նշանակվում են դիտորդները և ստանում դիտարկման հստակ աշխատանքներ: Դերակատարները կարդում, մտածում են իրենց դերերի մասին:

Խաղի փուլում խաղացողները ստանձնում են իրենց դերերը և կատարում դրանք՝ կախված իրավիճակից: Մյուսները կատարում են իրեն դիտորդական հանձնարարությունները:

Անդրադարձի փուլում խաղացողներն առաջին հերթին արտահայտում են խաղի ընթացքում իրենց ունեցած զգացմունքները, դիտորդները ներկայացնում են իրենց դիտարկումները, հետո խոսվում է դերախաղի ժամանակ կայացրած որոշումների և գործողությունների մասին և աշխատանքն ամփոփվում է եզրակացություններով:

Ցանկացած դերախաղի համար կան հստակ կանոններ, որոնց պահպանումը հնարավորություն կտա արդյունավետ աշխատելու և հետագայում էլ բարելավելու արդյունքները, ինչն էլ հենց ՁԳ-ի նպատակն է: Այդ կանոններից են՝

- Ակտիվ են մասնակիցները: Ուսուցիչը հետևում է ընթացքին, անհարկի չի միջամտում դերախաղին:
- Դերախաղն ունի հստակ սկիզբ և ավարտ:
- Դեր ստանձնելու պարտադրանք չկա:
- Դեր չստանձնած սովորողները ստանում են դիտորդական հանձնարարություններ:
- Անդրադարձի ժամանակ իրականացվում է օբյեկտիվ քննադատություն. անձնական ծաղրը և ագրեսիան անհանդուրժելի են:
- Հստակ տարանջատվում են դերակատարները և կերպարը:

Ուսուցիչը պետք է պարզ և հստակ ձևակերպի խաղի հրահանգները, դերերի վերաբերյալ ցուցումները շարադրի այնպես, միաժամանակ այնպիսի պահանջներ դնի, որ սովորողները կարողանան խաղի միջոցով ուսումնական նպատակին հասնեն:

Դերախաղի ժամանակ հնարավոր են փոքրիկ վրիպումներ. այդպիսի դեպքերում կարիք չկա նրանց վրա ճնշում գործադրելու: Եթե դերախաղերը պարբերաբար կազմակերպվեն, բոլոր սովորողները պարբերաբար կգիտակցեն դրանց կարևորությունը: Հնարավոր է՝ նրանք թերահավատորեն վերաբերեն դրանց սկզբում. պետք է նրանց բացատրել դերախաղի կարևորությունը՝ նաև հետագայում մասնագիտական հմտություններ ձեռք բերելու հարցում:



Նկար2

ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ

| | |
|---|---|
| Առարկա | Մայրենի |
| Դասարան | 3-րդ |
| Թեմա | Ժողովուրդն իմաստուն է |
| Դասի թեման | «Երեք հարուստ» ավանդություն: Անձ և իր ցույց տվող գոյականներ |
| Էջը դասագրքում | 66 |
| Ժամաքանակ | 2 |
| Դասի տիպը | Նոր նյութի յուրացման դաս |
| Դասի նպատակը | Ամրապնդել լուռ և ընտրովի ընթերցանության կարողությունները<br>Ձևավորել կարողություններ կենտրոնների տեղափոխման մոդելով աշխատելու համար<br>Ստեղծագործական կարողությունների զարգացում<br>Անձ և իր ցույց տվող գոյականներից ունեցած գիտելիքների ամրակայում |
| Վերջնարդյունքներ | Կկարողանան առանձնացնել յուրաքանչյուր հերոսի խոսքն ու մեկնաբանել միտքը նկարների միջոցով<br>Կմասնակցեն կենտրոնների աշխատանքին՝ ստանձնելով համապատասխան դեր՝ կատարելով ստեղծագործական աշատանքներ<br>Կտարբերակեն անձ և իր ցույց տվող գոյականները |
| Միջառարկայական կապեր | Կերպարվեստ |
| Խաչվող հասկացություններ | Անհատներ և փոխհարաբերություններ |
| Անհրաժեշտ նյութեր | Դասագիրք, աշխատանքային քարտեր, մագնիսական |

| | |
|---|---|
| | գրատախտակ, գունավոր նշիչներ |
| Մեթոդներ | ԽԻԿ |
| Գնահատում | Միավորային, ձևավորող |

Որ պեսզի հասկանանք, թե ինչ է հետադարձ կապը, նայենք ՁԳ-ի քայլաշարին. (նկար2):

Այս գծապատկերը մեզ հուշում է, որ հետադարձ կապն անմիջապես հաջորդում է ընթացիկ հայտորոշմանը, որի միջոցով հասկանալի է դառնում, թե յուրաքանչյուր սովորող ինչպես է ընկալում կամ յուրացրել ուսուցանվող նյութը, ինչ ձեռքբերումներ է գրանցել և ինչ բացթողումներ ունեցել:

Հետադարձ կապը ուսուցման և ուսումնառության գործընթացում սովորողների և ուսուցչի կատարած որոշակի քայլերի և գործողությունների փոխադարձ համարժեք արձագանքն է: Հետադարձ կապն ապահովելիս ուսուցիչն սովորողներին պետք է հղի քաջալերող խոսքեր, հուշումներ, ստուգող բաց և փակ հարցեր, որոնք կօգնեն նրան հասկանալ իր ուժեղ և թույլ կողմերը, բացահայտել բացթողումները և բարելավել ուսումնառության արդյունքները: Հետադարձ կապի նպատակը սովորողների ուսումնառության առկա մակարդակն ակնկալվող վերջնարդյունքին հնարավորինս մոտեցնելն է: Սա նշանակում է, որ հետադարձ կապի համար տրված զանազան միջոցներն ու հնարները պետք է բխեն միայն սովորողներին առաջ մղելու, գիտելիքները խորացնելու, թերությունները արագ վերացնելու և արդյունքները բարելավելու նպատակից:

## ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ և ԳՆԱՀԱՏՈՒՄ

Այժմ ներկայացնենք դասի պլան, որի արդյունքում աշակերտների գործողությունները գնահատվելու են նաև ձևավորող գնահատման միջոցով.

Դասի փուլերը.

Քայլ 1. Հանձնարարությունների ստուգում, հնարավոր սխալների վերլուծություն:

Քայլ 2. Դասահարցում, բառային աշխատանք

Նոր նյութի հաղորդում

1. Խթանման փուլ

Մտագրոհ




Սովորողների մտքերը գրառում ենք կարմիր նշիչով:

Խաղ «Տիեզերանավում»

Խաղի կանոնները. Սովորողները նստում են շրջանաձև, ստանում են հրահանգ՝ թերթիկների վրա գրել ընդամենը մեկ բան, որը կցանկանային իրենց հետ վերցնել տիեզերք թռչելու համար, որն, ի դեպ, ամենակարևորն է ու ամենաթանկը: Կարևորագույն պայմանն այն է, որ մտքերի կրկնության դեպքում տվյալ սովորողները դուրս են մնում «տիեզերք թռչելուց»: Յուրաքանչյուրը պետք է հիմնավորի իր գրածը:

2. Իմաստի ընկալում

Քայլ 1. Անդրադարձ Խիկար Իմաստունին և նրա դաստիարակչական մտքին

Քայլ 2. Տեքստի լուռ ընթերցում (մատիտով նշում են անծանոթ բառերն ու բառակապակցությունները), նշված բառերի իմաստային, բառակազմական վերլուծություն

Քայլ 3. Տեքստում գտնել և ընթերցել համապատասխան տողերը.

ա) Առաջին մարդու կարծիքով ո՞րն էր նրա հարստությունը:

բ) Ո՞վ էր երկրորդ մարդը: Ի՞նչ ասաց նա իր հարստության մասին:

գ) Ի՞նչ ասաց երրորդ մարդը, ո՞րն էր նրա հարստությունը:

դ) Ինչպե՞ս լուծեց վեճը Խիկար Իմաստունը:

Քայլ4. Դասարանը բաժանել ուսումնական կենտրոնների, իսկ աշակերտներին՝ 4 խմբի: Յուրաքանչյուր խումբ դասի որոշակի փուլում գտնվելով որևէ կենտրոնում կատարում է հանձնարարությունը և ուսուցչի ծափ-նշանով տեղափոխվում հաջորդ կենտրոն:

ԿԵՆՏՐՈՆ1. ՆԿԱՐԻՉ ՁևԱՎՈՐՈՂՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ.

Առաջադրանք. Ինչպե՞ս կարող է երեք մարդկանցից յուրաքանչյուրն օգտագործել իր հարստությունը: Քննարկել խմբով և ցույց տալ նկարների միջոցով:

ԿԵՆՏՐՈՆ2. ՀԱՐՑԱՍԵՐ ՎԵՐԼՈՒԾԱԲԱՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Առաջադրանք. Ամբողջացրեք նախադասությունը. «Հարուստը նաէ, ով….»

ԿԵՆՏՐՈՆ3. ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Առաջադրանք. Փորձել պատմությունը դարձնել առակ

ԿԵՆՏՐՈՆ4. ԼԵԶՎԱԳԻՏԱԿՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Առաջադրանք. Տեքստից դուրս գրել անձ և իր ցույց տվող գոյականները:

Յուրաքանչյուր կենտրոնում խումբն իր աշխատանքն ավարտելուց հետո թերթիկը շրջում է հակառակ կողմի վրա և առաջ գնում:

3. ԿՇՌԱԴԱՏՈՒՄ

Խմբերը ցույց են տալիս իրենց աշխատանքները՝ ուղեկցելով համապատասխան մեկնաբանություններով:

Ամփոփում

Անդրադարձ կատարել խթանման փուլում ստեղծած մտագրոհի գծապատկերին՝ այլ գույնի նշիչով կատարելով լրացումներ

Լրացնել ելքի քարտեր՝ 3-2-1

- Նշել 3 բան, որ հավանեցիք

- Նշել 2 բան, սովորեցիք
- Նշել 1բան, որ կփոխեիք

Տնային հանձնարարություն

3-րդ դասարանում սովորողների գնահատումն իրականացվում է թե՛ միավորային, թե՛ ձևավորող գնահատման միջոցով: ՁԳ-ի համար կարող ենք ունենալ այսպիսի ստուգաթերթ, որտեղ կատարված նշումները ցույց կտան սովորողների՝ նյութն ընկալելու, քննարկումներին, կենտրոնների աշխատանքին մասնակցելու ակտիվությունը:

| | Սով.1 | Սով.2 | Սով.3 | Սով.4 |
|---|---|---|---|---|
| Կարողանում է արտահայտիչ ընթերցել նյութը | | | | |
| Կարողանում է գտնել հարցերի պատասխանները տեքստում | | | | |
| Ակտիվ մասնակցում է բառային աշխատանքներին | | | | |
| Համագործակցում է բոլորի հետ | | | | |
| Բացատրում է բոլորին | | | | |
| Պատրաստակամ կատարում է հանձնարարությունները | | | | |
| Կարողանում է լսել | | | | |
| Արագ է կողմնորոշվում | | | | |
| Առաջարկում է նոր մտքեր | | | | |
| Եզրակացություններ է անում | | | | |

Այս ընթացքում ինձ հետաքրքրեց նաև ծնողների և ուսուցիչների կարծիքները ՁԳ-ի մասին: Այդ պատճառով փոքրիկ հարցում իրականացրեցի ուսուցիչների շրջանում առանձին, ծնողների շրջանում՝ առանձին:

Հարցումներ 2-րդ դասարանի ծնողների շրջանում ձևավորող գնահատման մասին: Հարցմանը մասնակցել են 2-րդ դասարանում երեխա ունեցող 22 ծնող՝ (նկար3)



Նկար3

Հարցումներ 2-րդ դասարանում դասավանդող ուսուցիչների շջանում՝ անկախ դասավանդած առարկայից: Հարցմանը մասնակցել է 10 ուսուցիչ, որոնց կարծիքները դիագրամի ձևով բերված է ստորև (նկար 4)

Հարց 1. Ինչպե՞ս եք գնահատում Ձեր ծանրաբեռնվածությունը (գնահատեք 10 միավորանոց սանդղակով)

Հարց 2. Ինչքանո՞վ կապահովվի արդարացիությունն ԶԳ-ի ժամանակ (գնահատեք 10 միավորանոց սանդղակով)

Հարց 3. Ինչպե՞ս կգնահատեք Ձեր պատարաստվածությունը ԶԳ կատարելու համար

Հարց 4. Կուզեի՞ք վերադառալ միավորային գնահատմանը (այո՝ 10, չգիտեմ՝ 5, ոչ՝ 0)



Նկար4

## ԱՄՓՈՓԻՉ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ամփոփիչ գնահատման նպատակն է ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան սովորողների ուսումնական ձեռքբերումների գնահատումը դասի, թեմայի, կիսամյակի, ուսումնական տարվա, ինչպես նաև կրթական աստիճանի ավարտին՝ ամփոփիչ ատեստավորման միջոցով:

Ամփոփիչ գնահատման արդյունքների հիման վրա ձևավորվում է կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատման արդյունքների հիման վրա՝ տարեկան ամփոփիչ գնահատականը:

Կարևոր է նկատի ունենալ, որ ամփոփիչ ստուգում կարելի է իրականացնել ոչ միայն թեմայի կամ կիսամյակի ավարտին, այլ նաև դասի՝ արդյունքն ամրագրելով գնահատականով կամ բառային բնութագրումով (բոլոր, մասնավորապես՝ 1 - 4-րդ դասարաններում):

1-ին դասարանում տարիներ շարունակ կիրառվող ոչ միավորային գնահատումը փաստում է, որ միավորների բացակայությունը բացասականորեն չի անդրադառնում

սովորողների առաջադիմության վրա, ընդհակառակը՝ նրանք կենտրոնանում են ոչ թե գնահատականի, այլ ուսման ընթացքի ու արդյունքների վրա: Դա նաև ապահովում է սովորողների հոգեկան խաղաղությունը ուսումնական գործունեությանը հարմարվելիս:

Նույն սկզբունքով աշխատանքերը սահուն կշարունակվեն նաև տարրական ծրագրի մյուս՝ 2 – 4-րդ դասարաններում:

Էլեկտրոնային մատյանում կախվող տողի միջոցով ուսուցիչները պարբերաբար կատարելով նշումներ՝ հող են նախապատրաստում կիսամյակային ամփոփիչ գնահատման: Եվ, ինչպես միավորային գնահատման ժամանակ կիսամյակային գնահատականը ինքնաշխատ եղանակով ձևավորվում էր կիսամյակի ընթացքում ստացած գնահատականների միջին թվաբանականը հաշվելու միջոցով, այս դեպքում էլ՝ կիսամյակի ընթացքում ստացած բնութագրիչների միջոցով նույն՝ ինքնաշխատ եղանակով կազմվում է կիսամյակային ամփոփիչ բնութագիր:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Եթե կրթության ցանկացած փուլում սովորողի մոտ նկատվում են դժվարություններ, որոնք սովորողին խանգարում են մասնակցություն ունենալ ուսումնական գործընթացին, ապա անհրաժեշտություն է առաջանում նոր հնարքների դիմել՝ սովորողին ներգրավելու ուսումնական գործընթացում: Հենց այդ պատճառով էլ 1-4-րդ դասարաններում նպատակահարմար է կիրառել բնութագրող և ձևավորող գնահատում:

Որպես ուսուցիչ, ով աշխատում է տարրական դասարանների աշակերտների հետ, կարծում եմ ճիշտ է, որ միավորային գնահատումը փոխարինվել է ուսուցանող, ձևավորող գնահատմամբ: Ձևավորող գնահատման գործիքների կիրառումը նպաստում է գիտելիքի նկատմամբ հետաքրքրությունների ձևավորմանը և խորացմանը: Ճիշտ է, թե՛ ուսուցիչների, թե՛ սովորողների, թե՛ ծնողների համար հարթ չի ընթանալու այս անցումը, բայց նոր չափորոշչային պահանջների ապահովումը միայն միավորային գնահատման միջոցով հնարավոր չէ իրականացնել: Շատերի մոտ դեռ շարունակվում են անհանգստությունների, անվստահության շղթան (դիագրամների օրինակները ևս ցույց տվեցին), բայց դա էլ գնահատման գործիքներին անծանոթ կամ ոչ լիարժեք ծանոթ լինելու պատճառով է: Հուսով եմ՝ մեր ուսուցչական համայնքը հեշտությամբ կինտեգրվի այս գործընթացին և պարբերական հաջողություններ կգրանցվեն:

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Կզնակ» հմնադրամ, գնահատման մշակման և զարգացման բաժին (համացանց)
2. Հանրակրթության պետական չափորոշիչ
3. Աստղիկ Բալայան «Գնահատման գործիքներ»
4. Գնահատում (նոր ՀՊՉ, «Կզնակ» հիմնադրամ) (համացանց)
5. Տավուշի մարզում կատարած աշխատանքների վերլուծություն (համացանց)